ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՀՀ-ՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

ԿՆՅԱԶ ՍԱՐՈՅԱՆ

2011 թվականն աշխարհում նշանավորվեց որպես քաղաքացիական լայնածավալ շարժումների, ժողովրդական հուզումների, հակակառավարական բողոքի ցույցերի տարի: Հայաստանը, ի թիվս հետխորհրդային մի շարք այլ երկրների (Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան), ևս անմասն չմնաց այս ընդհանուր միտումներից:

Արձագանքելով այս ամենին՝ ժողովրդավարացման գործընթացների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների կողմից արդեն կարծիքներ են հնչում, որ հընթացս տեղի ունեցող կերպափոխումները բոլորովին նոր որակներ են հաղորդում ժողովրդավարական գործընթացների տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող «քաղաքացիական մշակույթ» հասկացությանն ինչպես համախմբված, այնպես էլ դեռ ժողովրդավարացման փուլը չավարտած հասարակություններում: Խոսքն առաջին հերթին այն մասին է, որ քաղաքացիական մշակույթի վերաբերյալ առկա նախկին մոտեցումներով սահմանվող քաղաքական էլիտայի հանդեպ չեզոք և քաղաքական կյանքին առավելապես ընտրական գործընթացների միջոցով մասնակցող քաղաքացու մոդելը փոփոխությունների է ենթարկվում: Արձանագրվող կերպափոխումներն էական ազդեցություն են թողնում ժողովրդավարական ռեժիմների վրա[1]: Քաղաքական համակարգի, քաղաքական ինստիտուտների և հասարակության միջև կապն ապահովող քաղաքացիական մշակույթն այլևս ընկալվում է որպես քաղաքական կյանքին հասարակության ժողովրդավարական մասնակցությունն ապահովող կենսունակ ու արդյունավետ գործիք: Այս տեսանկյունից քաղաքացիական մշակույթի շրջանակներում քաղաքացիների սուբյեկտայնության գործոնը նոր որակներ ու հնարավորություններ է ձեռք բերում: Ներկայացուցչականության ինստիտուտը, որի հիմնական գործիքարանն ընտրություններն ու քաղաքական կյանքին մասնակցության ավանդական ձևերն են, լրջագույն վերափոխումների է ենթարկվում: Քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացում ընտրական փուլերն այլևս չեն կարողանում երաշխավորել քաղաքական համակարգի ու քաղաքական ինստիտուտների հանդեպ հանրության կայուն վստահության ապահովում, ինչն էլ իր հերթին մարտահրավեր է նետում հա-

[1] Տե՛ս **Welzel C.**, Freedom Rising: Human Empowerment and the Quest for Emancipation (New York: Cambridge University Press, 2013), էջ 20-23:

մակարգային կայունությունն ապահովող այնպիսի գործոնին, ինչպիսին քաղաքական համակարգի լեգիտիմությունն է: Հատկապես անցումային փուլում գտնվող հասարակությունների պարագայում, ռեժիմի իրավական բնութագրումը լինելուց զատ, լեգիտիմությունը սկսում է առավելապես ընկալվել որպես հանրության վստահության ցուցիչ, ինչով էլ պայմանավորված՝ կառավարող էլիտաները սկսում են առերեսվել լեգիտիմության շարունակական պահպանման խնդրին:

Ժողովրդավարության համախմբման ճանապարհին գտնվող Հայաստանի հասարակությունը ևս օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով զերծ չի եղել փոփոխությունների ազդեցությունից, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ քաղաքացիական մշակույթի տեսանկյունից տեղի է ունեցել քաղաքացու մոդելի փոփոխություն, և որ Հայաստանի հետագա ժողովրդավարացման գործընթացն ու զարգացման հեռանկարները նաև պետք է գնահատել ու արժևորել նոր ի հայտ եկած հանգամանքները հաշվի առնելով:

Դեռևս 1980-ականների վերջերին Գաբրիել Ալմոնդն ու Սիդնեյ Վերբան քաղաքացիական մշակույթի՝ իրենց վերանայած մոտեցումներում շեշտադրեցին, որ ժողովրդավարական քաղաքացիական մշակույթի պարագայում առանցքային համարվող քաղաքացին ոչ թե մշտապես է ակտիվ, այլ օժտված է պոտենցիալ ակտիվությամբ[2]: Այսինքն՝ եթե կառավարող էլիտան ընդունում է այնպիսի քաղաքական որոշում, որն ուղղակի հակասում է հանրության լայն շերտերի ակնկալիքներին, ապա քաղաքացիները կարող են հանրային դժգոհության միջոցով բարձրաձայնել իրենց անհամաձայնությունը և փորձել կառավարող էլիտաներին այդ կերպ ուղղորդել գտնելու այնպիսի լուծումներ, որոնք ընդունելի են հանրության լայն շրջանակների համար: Ըստ նրանց՝ այս հնարավորությունն իրացնելուց հետո քաղաքացիները կրկին վերադառնում են իրենց պասիվ դիրքին՝ թույլ տալով էլիտաներին շարունակել հետագա կառավարումը: Այս տեսանկյունից հեղինակների հիմնական շեշտադրումն այն է, որ կայուն քաղաքացիական մշակույթի հիմնական գրավականը քաղաքացիների ակտիվության և պասիվության միջև պահպանվող յուրօրինակ հավասարակշռությունն է: Եվս մեկ գործոն է կառավարող էլիտաների և քաղաքական ինստիտուտների հանդեպ հանրության կայուն վստահությունը[3]: Ենթադրում ենք՝ հեղինակների նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ քաղաքական ինստիտուտների և կառավարող էլիտաների հանդեպ քաղաքացիների ցուցաբերած չեզոքությունը դիտարկվում է որպես ժողովրդավարության գաղափարի հանդեպ հասարակության նվիրվածության պահպանման և առհասարակ ժողովրդավարական ռեժիմի կայունության գլխավոր երաշխիք: Պատահական չէ, որ հեղի-

---

[2] Տե՛ս **Алмонд Г., Верба С.** Гражданская культура и стабильная демократия // "Политические исследования", 1992, № 4, էջ 122-126:

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 128-131:

նակները պնդում են այն դրույթը, որ քաղաքացիական ակտիվությունը չի կարող հանգեցնել համակարգի անկայունության, քանի որ այդ ակտիվության ծավալները միշտ սահմանափակ են: Որպես քաղաքացիների չեզոքության և համակարգի կայունության ապահովման հաջորդ մեխանիզմ՝ հեղինակները դիտարկում են կառավարող էլիտաների մոտ գոյություն ունեցող այսպես կոչված «ժողովրդավարական առասպելը», ըստ որի՝ կառավարողները միշտ ի գիտություն են ընդունում հասարակության սուբյեկտայնության հանգամանքը: Սակայն մի շարք երկրների վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ սոցիալ-քաղաքական փոփոխությունների համատեքստում դրսևորվող քաղաքացիական ակտիվությունը նեղ առումով որևէ խնդրի նկատմամբ կուտակված դժգոհության ցուցադրում չէ, ինչպես որ ժամանակին կարծում էին Ալմոնդն ու Վերբան, այլ այն անմիջականորեն կապ ունի արդի ժողովրդավարական ընթացակարգերի գործառության որակների հետ: Ասվածն առաջին հերթին վերաբերում է քաղաքական ինստիտուտների, հատկապես ներկայացուցչական ինստիտուտի հանդեպ հասարակության անվստահությանը, քաղաքական համակարգի և հասարակության փոխհարաբերություններում այդ հիմքով ի հայտ եկող օտարվածությանը, քաղաքական մասնակցության կերպափոխմանը: Քաղաքացիական մշակույթի տեսանկյունից այս կարևորագույն կերպափոխումների համակարգային մեկնաբանման առումով ծանրակշիռ նշանակություն ունեն ամերիկացի սոցիոլոգ և քաղաքագետ Ռոնալդ Ինգելհարթի դիտարկումները: Իր կատարած սոցիոլոգիական հետազոտությունների հիման վրա նա հանգել է այն եզրակացությանը, որ քաղաքացիների սուբյեկտիվ կողմնորոշումների և սոցիալ-քաղաքական օբյեկտիվ իրողությունների միջև առկա է կոռելիացիոն-պատճառական կապ, ինչն էլ իր հերթին անմիջական ազդեցություն ունի ժողովրդավարական ընթացակարգերի վրա[4]: Այս առումով քաղաքացիական մշակույթի միջուկ համարվող ժամանակակից քաղաքացիական ակտիվիզմն Ինգելհարթը պայմանավորում է մարդկանց մեջ արժեքաբանական հեղափոխությամբ՝ ըստ էության այս կերպ շրջանառության մեջ դնելով պոստմատերիալիզմի հայեցակարգը, որի համաձայն՝ նոր սերունդը, մի քանի տասնամյակ ապրելով անվտանգային միջավայրում և կրելով տնտեսական շեշտակի աճի արդյունքները, այլևս ուղղորդվում է ոչ թե զուտ մատերիալիստական, այլ սեփական կյանքը կառավարելու լիակատար ազատություններ ապահովող արժեքային կողմնորոշիչներով, որոնք էլ իրենց ազդեցությունն են թողնում վարչակարգի, քաղաքական ինստիտուտների և հանրային քաղաքականության վրա: Ըստ այդմ՝ Ինգելհարթը փաստորեն նախանշում է քաղաքացու նոր մոդելի ի հայտ գալու հանգամանքը, որն առանցքային նշանակություն ունի քաղաքացիական մշակույթի ավանդական ընկա-

[4] Տե՛ս **Inglehart R., Welzel Ch.**, Modernization, Cultural Change, and Democracy //New York: Cambridge University Press// 2005, էջ 115-135:

լումների վերաձևակերպման հարցը դիտարկելիս[5]:

Քաղաքացիական ակտիվիզմի մեկնաբանման գործում, պոստմատերիալիզմի հայեցակարգից բացի, կարևոր նշանակություն ունեն նաև գերմանացի քաղաքագետ Քրիստիան Վելզելի «էմանսիպացիայի ընդհանուր տեսությունը» և Ռասել Դալթոնի և Քրիստիան Վելզելի կողմից շրջանառության մեջ դրված «allegiance-assertion theory/չեզոք-պահանջատեր տեսությունը», որը բնութագրում ու ներկայացնում է արդի սոցիալ-քաղաքական իրողությունների համատեքստում գործառող քաղաքացու մոդելի որակական կառուցակարգերը[6]: Երկու տեսական հայեցակարգերում էլ լայնորեն քննության է առնվում այն հարցը, թե ինչպես են ազատական արժեքների և սոցիալական մոդեռնիզացիայի ազդեցությամբ փոփոխվել քաղաքական ինստիտուտների հանդեպ քաղաքացիների քաղաքական կողմնորոշումները: Այս տեսական հայեցակարգերն ապացուցում են, որ ժողովրդավարական մասնակցության գործում քաղաքացիներն այլևս չեն սահմանափակվում էլեկտորալ վարքով, այլ առաջնորդվում են քաղաքական կյանքին մասնակցության առավել լայն քաղաքացիական գործիքակազմով:

Քաղաքացիական ակտիվիզմի տեսական հայեցակարգերի մշակման գործում կարևոր ավանդ ունի նաև քաղաքական գործողությունների տեսությունը հատկապես այն առումով, որ քաղաքացիական ակտիվությունը դիտվում է որպես ժողովրդավարության բնական բաղադրիչ, հետագա ժողովրդավարացման գործընթացներում շարժիչ ուժ և ընդհանուր առմամբ արդիականացման ու մարդկային զարգացման խորհրդանիշ[7]: Այս հայեցակարգը ևս քաղաքացիական ակտիվիզմի պատճառների թվում նշում է միջսերնդային փոփոխությունները, կրթության իրավունքի ընդլայնումն ու ճանաչողական ունակությունների բարելավումը, ազատական արժեքների աստիճանական գերիշխանությունը: Քրիստիան Վելզելի «մարդկային հզորացման գործընթացի» (human empowerment) տեսությունը, կենտրոնանալով ազատական արժեքների հետևանքների վրա, բացատրում է, թե ինչպես են դրանք մարդկանց մեջ խթանում ակտիվ վարքին ներհատուկ դրդապատճառներ, մղում սոցիալական ակտիվ գործողությունների, ուժեղացնում ժողովրդավարական նորմերին հանձնառությունը: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ «բողոքի ալիքներն աճում են ոչ միայն այն պատճառով, որ մեծանում է կառավարության հանդեպ մարդկանց դժգոհությունը, այլև արձանագրվող տնտեսական և քաղաքական առաջընթացը ռեսուրսներ է տրամադրում նրանց, ովքեր քաղաքական պա-

---

[5] Տե՛ս **Inglehart R.**, "The Silent Revolution in Europe: Intergenerational Change in Post-Industrial Societies," American Political Science Review 65 (1971), էջ 991–1017:

[6] Տե՛ս **Dalton R., Welzel Ch.,** The Civic Culture Transformed from Allegiant to Assertive Citizens, Cambridge University Press, 2014, էջ 282-306:

[7] Տե՛ս **Samuel B., Kaase M.,** Political Action: Mass Participation in Five Western Democracies. Beverly Hills, CA: Sage, էջ 524:

հանջներ ունեն»[8]: Թ. Ջորջ Յակոբսոնի և Օ. Լիսթհաուգի դիտարկմամբ էլ աստիճանաբար գերիշխող է դառնում այն իրողությունը, որ քաղաքացիների կողմից դրսևորվող քաղաքացիական ակտիվությունը վերածվում է կայուն վարքի ձևի՝ ցուցաբերելով պարբերաբար կրկնվելու միտումներ[9]: Դիտարկելով նախկին սոցիալիստական ճամբարի երկրների փորձը հեղինակները եզրակացրել են, որ այս երկրներում ևս ժողովրդավարական մասնակցության գործում էական դեր է ստանձնում քաղաքացիական ակտիվիզմի հիմքով դրսևորվող քաղաքացիական մշակույթը: Ժողովրդավարական մասնակցության տեսանկյունից հասարակության սուբյեկտայնության ընդգծման հարցում կարևոր նշանակություն ունի նաև ֆրանսիացի արդի տեսաբան Պիեռ Ռոզանվալոնի «հակաժողովրդավարության հայեցակարգը», որով շրջանառության մեջ է դրվում հասարակությանը զուտ ընտրողից քաղաքական դերակատարի վերածող երեք մետաֆոր՝ հասարակությունը որպես վերահսկող, հասարակությունը որպես կանխարգելող և հասարակությունը որպես դատավոր: Հիմք ընդունելով այս դատողությունները՝ Ռոզանվալոնը հակաժողովրդավարության հայեցակարգի ներքո քննության է առնում ժողովրդավարական մասնակցության հարցը և առաջ քաշում այն դրույթը, որ մասնակցության ոչ կոնվենցիոնալ ձևերը (հակակառավարական ցույցեր, ակցիաներ, քաղաքացիական խաղաղ անհնազանդության ցանցային գործողություններ) լիակատար կերպափոխման են ենթարկում քաղաքական կյանքին մասնակցության ավանդական ձևերն ու մեթոդները, իսկ հասարակության կողմից կառավարող էլիտաների վրա քաղաքացիական ճնշումն էլ նպատակադրված նպաստում է ժողովրդավարական արդի ընթացակարգերի արդյունավետության բարձրացմանը, թափանցիկ ու հաշվետու կառավարում իրականացնելուն[10]:

Մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ քաղաքական կուսակցություններին անդամագրվելու նվազող վիճակագրությունը, ինչպես նաև ընտրական մասնակցության նվազող ցուցանիշները խթանում են ժողովրդավարական մասնակցության նոր ձևերի ի հայտ գալը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2006-2013 թվականներին աշխարհի մի շարք երկրներում արձանագրված քաղաքացիական ակտիվիզմի դրսևորմամբ զուգակցված բողոքի ցույցերի գրեթե 44 %-ի դեպքում քաղաքացիների բողոքն ուղղված է եղել ներկայացուցչականության ինստիտուտի և քաղաքական համակարգի մի շարք ինստիտուտների անարդյունավետ գործառության դեմ[11]: Քաղաքացիների

---

[8] Տե՛ս **Dalton R., Sickle A. and Weldon S.,** The Individual-Institutional Nexus of Protest Behavior //British Journal of Political Science 40// 2010, էջ 51–73:

[9] Տե՛ս **Georg J. T. and Listhaug O.,** Social Change the Politics of Protes //Cambridge University Press, 2014, էջ 217:

[10] Տե՛ս **Rosanvallon P.**, Counter-Democracy. Politics in an Age of Distrust: (Cambridge: Cambridge University Press, 2008), էջ 195-214:

[11] Տե՛ս **Ortiz I., Burke S., Berrada M., Cortes H.,** World Protests 2006-2013// Initiative for Policy Dialogue and Friedrich-Ebert-Stiftung New York Working Paper 2013// էջ 21:

քաղաքացիական ներգրավվածությունը (civic engagement) որպես գրավիչ այլընտրանք է հանդես գալիս կառավարող էլիտաների ցածր արդյունավետությամբ գործառույթին: Հետևաբար պատահական չէ, որ 2006-2013 թվականներին արձանագրված քաղաքացիների բողոքի ցույցերի շուրջ 80 %-ի հասցեատերերը եղել են ազգային կառավարությունները՝ որպես քաղաքական որոշումներ կայացնող լեգիտիմ ինստիտուտներ, որոնք ի պաշտոնե պատասխանատու են իրենց քաղաքացիների առջև, սակայն չեն կարողանում համարժեք արձագանքել հանրության պահանջներին ու սպասելիքներին[12]: Հատկանշական է, որ քաղաքացիական ակտիվիզմի հիմքով տեղի ունեցող բողոքի ցույցերն ու գործողությունները թեև արտաքուստ կարող են առանձին դեպքերում ունենալ որոշակի սահմանափակ օրակարգ, ինչպես, օրինակ, տնտեսական բարեփոխումներ կամ զուտ բնապահպանական, սակայն համակողմանի վերլուծությունները ցույց են տալիս, որ քաղաքացիների դժգոհությունը իրականում մեկ կետի է ուղղված՝ իրական ժողովրդավարական ընթացակարգերի ոչ արդյունավետ գործառությանը, քանզի մնացած ամեն ինչ ածանցյալ է դառնում: Կայացած և արդյունավետ ժողովրդավարության բացակայությունն է, որ պատճառ է դառնում թե՛ սոցիալական և թե՛ տնտեսական բնույթի խնդիրների ի հայտ գալուն: Ասվածն առնվազն պատճառաբանված է դարձնում պնդումն այն մասին, որ քաղաքացիական ակտիվիզմի հիմքով քաղաքացիական մշակույթն ուղղակիորեն ազդում է ռեժիմի ժողովրդավարացման վրա: Այս տեսանկյունից ժողովրդավարական մասնակցության գործիքակազմը ևս էական կերպափոխումների է ենթարկվում[13]: Քանի որ ժողովրդավարական մասնակցության հայեցակարգը արդի ընկալումներին համահունչ դինամիկ փոփոխվող երևույթ է, ուստի մասնագիտական գրականության մեջ դեռևս բացակայում է այս հայեցակարգի միասնական ընդունված սահմանում: Այս առումով թերևս առավել ընդունելի մոտեցում կարելի է համարել այն ըմբռնումը, որ քաղաքացիական ակտիվիզմի հիմքով ժողովրդավարական մասնակցությունը ենթադրում է սովորական քաղաքացիների կողմից գործողությունների շարք՝ ուղղված համընդհանուր շահի բավարարմանը[14]: Ժողովրդավարական մասնակցության ձևերի շարքում կիրառական ադյունավետությամբ միջոցների դերում հանդես են գալիս այնպիսի մասնակցային գործողություններ, որոնք բնույթով քաղաքական չեն, սակայն հստակորեն միտված են քաղաքական խնդիրներ լուծելուն, ինչպես օրինակ՝ քաղաքացիական անհնազանդության ցանցային տեխնոլոգիաների կիրառումը, առանցքային նշանակության կառույցների և հաղորդակցության

[12] Տե՛ս նույն տեղը, էջ 35:

[13] Տե՛ս **Callahan, K.** (2007). Citizen participation: Models and methods /International Journal of Public Administration, 30 (11)/ էջ 1179–1196:

[14] Տե՛ս **Teorell J., Torcal, M., Montero J. R.** Citizenship and Involvement in European Democracies. A Comparative Analysis /London & New York: Routledge 2007/ էջ 334-357:

միջոցների շրջափակումը, քաղաքացիների սպառողական ուժի գործադրումը բոյկոտի նպատակով և այլն (boycotts and buycotts)[15]: Համացանցն ու տեղեկատվական տեխնոլոգիաների լայնածավալ հասանելիությունն անհատականացված բնույթ կրող մասնակցային այս քաղաքացիական գործողությունների համար մեծ հնարավորություններ են տալիս՝ շրջանառել գաղափարներ, ձևակերպել պահանջներ ու ներկայացնել քաղաքական օրակարգեր, որոնք վայրկենապես դառնում են հազարավոր մարդկանց սեփականությունը առանց որևէ կազմակերպչական հսկայական ռեսուրսների գործադրման:

Անկախությունից ի վեր՝ Հայաստանի քաղաքական համակարգի ժողովրդավարական անցման գործընթացում քաղաքացիական հասարակությունը տարբեր գնահատականներով դիտարկվել է որպես այդ գործընթացում կարևորագույն դերակատարում ստանձնած ինստիտուտ: Քաղաքացիական հասարակության և դրա կառույցների նկատմամբ մեծ ուշադրությունը՝ որպես ժողովրդավարության համախմբման մակարդակի հասնելու գործիքներ, նկատելի է նաև մասնագիտական անդրադարձներում: Առկա դիսկուրսների համաձայն՝ առնվազն վերջին երկու տասնամյակներում քաղաքացիական հասարակությունն իր ավանդական կառույցներով դարձել է Հայաստանում հանրային կյանքի տարբեր ոլորտներում առկա խնդիրների հիմնական բարձրաձայնողն ու հանրային պահանջ ձևակերպողը բոլոր այն դեպքերում, երբ իշխանություններ-հասարակություն հարաբերություններում ի հայտ է եկել շահերի բախում հանրային հնչեղություն ստացած տարբեր հարցերի շուրջ:

Հայաստանյան քաղաքացիական հասարակության և դրա կառույցների գործառության փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրության պահանջների ձևակերպումը և այն քաղաքական որոշում ընդունողներին ներկայացնելը քաղաքացիական հասարակության կողմից իրականացվել է առավելապես հասարակական կազմակերպությունների միջոցով: Սակայն վերջին տասնամյակում քաղաքացիական հասարակության դաշտում ի հայտ եկող որակական նոր երևույթները վկայում են, որ Հայաստանում հանրային պահանջ ձևակերպելու և որպես շահառու հանդես գալու առումով հասարակական կազմակերպությունները միակ դերակատարները չեն: Աստիճանաբար նոր թափ հավաքող և քաղաքացիական ակտիվիզմի ոչ ավանդական գործիքակազմ կիրառող քաղաքացիական շարժումները ժողովրդավարական մասնակցության տեսանկյունից նոր միտումներ են դրսևորում: Հայաստանում ներկայումս դրսևորվող քաղաքացիական ակտիվիզմի հիմքով հասարակական շարժումներն առավելապես կոլեկտիվ կազմակերպված քաղաքացիական ոչ բռնի գործողություններ են, որոնց միջոցով քաղաքացիների որոշակի խմբի կամ խմբերի մոտեցումներն ու տեսակետներն են ներկայացվում ինչպես տեղական ինքնա-

[15] Տե՛ս **Stolle, D., & Micheletti, M.** Political consumerism: Global responsibility in action /Cambridge: Cambridge University Press/ էջ 25:

կառավարման, այնպես էլ պետական կառավարման մարմիններին: Տարբեր գնահատականներով Հայաստանում քաղաքացիական նախաձեռնությունների վերելքը սկսվել է 2007 թվականից և լայն թափ առել արդեն 2011 թվականից: Այդ ամբողջ ժամանակահատվածում արձանագրվել են շուրջ չորս տասնյակ քաղաքացիական ամենատարբեր նախաձեռնություններ[16]:

Ամփոփելով քաղաքացիական ակտիվիզմի հիմքով քաղաքացիական մշակույթի դիտարկումը որպես ժողովրդավարական մասնակցության գործոն՝ Հայաստանի պարագայում կարելի է պնդել՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական մասը քննադատական կեցվածք ունի արդի ժողովրդավարական ընթացակարգերի արդյունավետության գնահատման հարցում: Նման դիրքորոշումը հանրության շրջանում առաջացրել է քաղաքական ինստիտուտների հանդեպ անվստահություն և օտարվածություն:
- Ժողովրդավարական ընթացակարգերից դժգոհությունը և այդ հիմքով քաղաքական ինստիտուտների հանդեպ դրսևորվող անվստահությունը ուղիղ համեմատական են հասարակության շրջանում սեփական սուբյեկտայնության գիտակցման աճին: Քաղաքական ինստիտուտների և քաղաքական իշխանության հետ փոխհարաբերություններում սեփական սուբյեկտայնության հայտը ներկայացնելու արդյունավետ տարբերակ է քաղաքացիական ակտիվիզմի հիմքով քաղաքական կյանքին ժողովրդավարական մասնակցությունը:
- Կառավարող էլիտաներից պահանջելով բարելավել ժողովրդավարական ընթացակարգերը, իրականացնել թափանցիկ ու հաշվետու կառավարում՝ քաղաքացիական ակտիվիզմի հիմքով քաղաքական կյանքին ժողովրդավարական մասնակցությունն ընկալվում և ամրագրվում է որպես ժողովրդավարության բնական բաղադրիչ, ժողովրդավարության համախմբման գործընթացում կարևոր գործոն և մարդկային զարգացման խորհրդանիշ: Այլ կերպ ասած՝ քաղաքացիական ակտիվիզմը հանդես է գալիս որպես քաղաքացիական մշակույթի կարևորագույն կառուցակարգ:
- Հայաստանում հասարակության սուբյեկտայնության բարձրացման առկա միտումները վկայում են, որ լուրջ կերպափոխումների է ենթարկվում նաև «իշխանության լեգիտիմություն» հասկացությունը: Այն աստիճանաբար դադարում է լինել միայն իրավական կատեգորիա: Լեգիտիմության ձևավորման աղբյուրների շարքում հանրության շրջանում վստահության գործոնն աստիճանաբար դառնում է լեգիտիմության ժամանակային չափման կարևոր ցուցիչ, որը կառավարող էլիտաներին ստիպում է մտածել լեգիտիմության երկարաժամկետ պահպանման հնարավորության մասին:

---

[16] Տե՛ս **Ishkhanyan A.** Civil society, Development and Environmental Activism in Armenia. Executive Summary, Yerevan 2013, էջ 25:

Այսպիսով՝ արդի սոցիալ-քաղաքական իրողությունների համատեքստում դրսևորվող քաղաքացիական ակտիվիզմը մի կողմից հասարակությանը վերածում է քաղաքական դերակատարի՝ որպես վերահսկողի, որպես կանխարգելողի, իսկ մյուս կողմից փոխակերպում է ժողովրդավարության գաղափարը՝ այն դարձնելով ավելի ներառական (inclusive), ինչն առնվազն նշանակում է ժողովրդավարական ներգրավման և միջամտության միջոցով հանրության ձայնի իրավունքի կշռի բարձրացում: Մյուս կողմից էլ հանդես գալով որպես Հայաստանի քաղաքական համակարգի ժողովրդավարացման կարևորագույն պայման՝ քաղաքացիական մշակույթն իր ժամանակակից դրսևորումներով առնվազն անհրաժեշտություն է դարձնում երկրում ժողովրդավարական ռեժիմի որակական կերպափոխման պահանջը:

Բանալի բառեր – *քաղաքացիական մշակույթ, քաղաքացիական մասնակցություն, ժողովրդավարական մասնակցություն, քաղաքացիական ակտիվիզմ, ներառական ժողովրդավարություն, հակաժողովրդավարություն*

КНЯЗ САРОЯН – ***Гражданская культура как фактор демократического участия в Армении***. – На основе анализа теоретических концепций гражданской активности в статье показано, что последние изменения в социально-политической жизни общества создали новую модель гражданина. Наблюдается трансформация лояльного его типа в тип настойчивый. Появление настойчивого гражданина подразумевает новые модели участия в политике, как, напрмер, неформальный и гражданский активизм. С учётом этих новых тенденций в статье подчёркнуто, что в последние годы гражданская культура, основанная на гражданской активности, стала в Армении эффективным инструментом демократического участия.

Ключевые слова: *гражданская культура, гражданское участие, демократическое участие, гражданская активность, инклюзивная демократия, контрдемократия*

KNYAZ SAROYAN – ***Civic Culture as a Factor for Democratic Participation in RA.*** – In the article, on the bases of analysis of modern theoretical concepts of civic activism, it is demonstrated, that the recent changes in the socio-political life of the societies created a new model of the citizen. From the point of view of civic culture, we are witnessing the transformation from the allegiance to the assertive type of citizen. The emergence of assertive citizen implies new models of political participation such as nonformal and civic activism as a tool for democratic participation. Having into consideration these new trends, in the article it is shown, that in Armenia during the recent years the civic culture based on civic activism has become as an effective tool from the point of view of democratic participation.

Key words: *civil culture, civic participation, democratic participation, civic engagement, inclusive democracy, counter democracy*